

**ՀԱՄԱՅՆՔԻ 1992 թվականի փետրվարի 10-ի 92/6/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ**

**Համայնքի տարածքում որոշ կարգերի ավտոմեքենաներում արագության սահմանափակիչներ տեղադրելու եւ օգտագործելու մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 75-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ ընդհանուր տրանսպորտային քաղաքականության նպատակներից մեկը Համայնքի տարածքում միջազգային տրանսպորտի նկատմամբ կիրառելի ընդհանուր կանոններ սահմանելը եւ տրանսպորտային միջոցների շրջանառությունը խթանելն է,

քանի որ ճանապարհային երթելեկության մասշտաբների մեծացումը եւ դրանով պայմանավորված վտանգի աճն ու անհարմարությունները բոլոր անդամ պետությունների համար ստեղծել են ճանապարհային անվտանգության հետ կապված եւ բնապահպանական լուրջ խնդիրներ,

քանի որ բեռնատար փոխադրամիջոցների եւ ավտոբուսների շարժիչի հնարավոր հզորությունը, որն անհրաժեշտ է՝ ժայռոտ լանջերը բարձրանալու համար, հնարավորություն է տալիս դրանք հարթ ճանապարհներին վարելու չափազանց մեծ արագությամբ, որը չի համապատասխանում փոխադրամիջոցի մյուս տարրերի մասնագրերի հետ, ինչպիսիք արգելակները եւ անվադողերն են. մինչդեռ հենց այդ պատճառով, ինչպես նաեւ որոշ երկրներում շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներից ելնելով, ավտոմեքենաների որոշ կատեգորիաների համար պարտադիր են դարձվել արագության սահմանափակիչները,

քանի որ արագության սահմանափակիչների բարենպաստ ազդեցությունը՝ կապված շրջակա միջավայրի պաշտպանության եւ էներգիայի սպառման, շարժիչի ու անվադողերի մաշվածության ու ճանապարհային անվտանգության հետ, կամրապնդվի, եթե նման սահմանափակիչները լայնորեն օգտագործվեն,

քանի որ արագության սահմանափակիչների օգտագործումն աննպատակ կլինի, եթե սահմանափակիչները չլինեն տեխնիկապես այնպիսի անթերի վիճակում, որ համարժեք մակարդակով հնարավոր լինի բացառել ցանկացած խարդախություն,

քանի որ որպես առաջին քայլ՝ պետք է սահմանվեն պահանջներ ավտոմեքենաների այն ամենաձանր տեսակների համար, որոնք առավել ընդգրկված են միջազգային տրանսպորտում եւ հետեւաբար, կախված անդամ պետությունների տեխնիկական հնարավորություններից ու փորձից, կարող են կիրառվել նաեւ ավտոմեքենաների թեթեւ տեսակների նկատմամբ,

քանի որ որոշ անդամ պետություններում բացառապես վտանգավոր նյութերի փոխադրման համար նախատեսված մեքենաները պետք է ապահովված լինեն արագության սահմանափակիչներով, որոնց առավելագույն արագությունը պետք է սույն Հրահանգով սահմանված արագությունից փոքր լինի, այս դեպքում տվյալ անդամ պետությունը պետք է կարողանա պահպանել նման կանոնակարգերը այն մեքենաների մասով, որոնք գրանցված են իրենց տարածքում, քանի որ դրանք ամրապնդում են ճանապարհային անվտանգությունը եւ հանրության քաղաքացիական պաշտպանությունը՝ սույն Հրահանգի նպատակներին համապատասխան,

քանի որ սույն Հրահանգով կարգավորվող M3 եւ N3 կարգերի փոխադրամիջոցների վրա արագության սահմանափակիչների տեղադրումը, որոնք գրանցվել են Հրահանգն ուժի մեջ մտնելուց առաջ եւ նախատեսված են բացառապես ազգային ուղեւորափոխադրումների համար, կարող են չափազանց ծախսատար լինել որոշ անդամ պետություններում. քանի որ պետք է հնարավորություն ընձեռել այդ անդամ պետություններին հետաձգելու սույն Հրահանգի 2-րդ եւ 3-րդ հոդվածների կիրառումը տվյալ փոխադրամիջոցների նկատմամբ,

քանի որ սույն Հրահանգը չի ազդում բացառիկ իրավունքների վրա՝ կապված երթելեկության համար արագության սահմանափակումների հետ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

Սույն Հրահանգի նպատակով «ավտոմեքենա» նշանակում է շարժիչով շարժման մեջ դրվող ցանկացած փոխադրամիջոց, որն ընդգրկվում է ստորեւ նշված կարգերից մեկի մեջ, եւ ունի առնվազն չորս անիվ, եւ որի առավելագույն արագությունը գերազանցում է 25կմ/ժ.՝

– M3 կարգի փոխադրամիջոցներ, որոնց առավելագույն քաշը գերազանցում է 10 մետրիկական տոննան:

– N3 կարգի փոխադրամիջոցներ,

M3 եւ N3 կարգերն այն կարգերն են, որոնք սահմանված են 70/156/ԵՏՀ հրահանգի (4) I հավելվածով:

### *Հոդված 2*

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ ճանապարհներին 1-ին հոդվածով նշված M3 կարգի ավտոմեքենաների օգտագործումն ապահովելու համար միայն այն դեպքում, երբ դրանց վրա տեղադրվեն արագության սահմանափակիչներ, որոնց առավելագույն արագությունը սահմանված է 100կմ/ժ:

### *Հոդված 3*

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ճանապարհներին, N3 կարգի ավտոմեքենաների օգտագործումն ապահովելու համար այն դեպքում, երբ դրանք ապահովված են սահմանափակիչով, որն այնպես է նախատեսված, որ ավտոմեքենաների արագությունը չգերազանցի 90կմ/ժ–ը. հաշվի առնելով տեխնոլոգիայի զարգացման ներկա փուլում կարգավորող արժեքի եւ երթեւեկության իրական արագության միջեւ տեխնիկական շեղման հնարավորությունները՝ այս սահմանափակիչի վրա սահմանված առավելագույն արագությունը պետք է լինի 86կմ/ժ:

2. Անդամ պետություններն իրավունք ունեն սահմանափակիչի համար որպես առավելագույն արագություն սահմանելու 85 կմ/ժ–ից պակաս արագություն այն փոխադրամիջոցների համար, որոնք օգտագործվում են բացառապես վտանգավոր նյութեր փոխադրելու համար եւ գրանցված են իրենց երկրի տարածքում:

### *Հոդված 4*

1. 2-րդ եւ 3-րդ հոդվածները կիրառվում են 1994 թվականի հունվարի 1-ից գրանցված փոխադրամիջոցների նկատմամբ:

2. 2-րդ եւ 3-րդ հոդվածներն ամենաուշը 1995 թվականի հունվարի 1-ից կիրառվում են 1988 թվականի հունվարի 1-ից մինչեւ 1994 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում գրանցված փոխադրամիջոցների նկատմամբ:

Այնուամենայնիվ, եթե այս փոխադրամիջոցներն օգտագործվում են բացառապես ազգային ուղեւորափոխադրումների համար, ապա 2-րդ եւ 3-րդ հոդվածները կարող են կիրառվել ամենաուշը 1996 թվականի հունվարի 1-ից:

#### *Հոդված 5*

1. Մինչ Համայնքի դրույթներն այս հարցերի մասով կիրառելը՝ 2-րդ եւ 3-րդ հոդվածներով նշված արագության սահմանափակիչները պետք է բավարարեն ազգային իրավասու մարմինների կողմից սահմանված տեխնիկական պահանջները:

2. Արագության սահմանափակիչները տեղադրվում են անդամ պետությունների կողմից հաստատված արհեստանոցներում կամ մարմինների կողմից:

#### *Հոդված 6*

2-րդ եւ 3-րդ հոդվածների պահանջները չեն կիրառվում զինված ուժերում, քաղաքացիական պաշտպանությունում, հակահրդեհային կամ արտակարգ իրավիճակների այլ ծառայություններում եւ հանրային կարգը պահպանելու համար պատասխանատու ուժերի կողմից օգտագործվող ավտոմեքենաների նկատմամբ:

Նույնը վերաբերում է այն ավտոմեքենաներին, որոնք՝

– ելնելով իրենց կառուցվածքից՝ չեն կարող օգտագործվել ավելի մեծ արագությամբ, քան 2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված սահմանաչափերը,

– օգտագործվում են ճանապարհների վրա՝ գիտական փորձարկումների համար,

– օգտագործվում են միայն հանրային ծառայությունների համար՝ քաղաքային տարածքներում:

### Հոդված 7

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին համապատասխանելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մինչեւ 1995 թվականի հունվարի 1-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից այդ դրույթներն ընդունվելիս դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին, իսկ պաշտոնական հրապարակման դեպքում՝ ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

### Հոդված 8

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում 1989 թվականի դեկտեմբերի 21-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Խորխե ԲՐԱԳԱ դե ՄԱՔԵԴՈ:

1) ՊՏ թիվ C 225, 30.08.1991թ., էջ 11:

2) ՊՏ թիվ C 13, 20.01.1992թ.:

3) ՊՏ թիվ C 40, 17.02.1992թ.

4) «Անդամ պետությունների՝ ավտոմեքենաների եւ դրանց կցասայլերի հավաստագրմանը վերաբերող իրավական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1970 թվականի փետրվարի 6-ի 70/156/ԵՏՀ հրահանգ (ՊՏ թիվ L 42, 23.02.1970թ., էջ 1): Վերջին անգամ 87/403/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 220, 08. 08. 1987թ., էջ 44):